ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

ՀՏԴ 159.9
DOI: 10.56246/18294480-2025.18-30

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԱՐԻԱՆԱ
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կիրառական
հոգեբանության ամբիոնի վարիչի ժ/պ,
էլփոստ՝mariana_avetisyan@yahoo.com
ԿՈՆՋՈՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ԱՄՆ, սերտիֆիկացված մոնտեսորի ուսուցիչ,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայցորդ
էլփոստ՝ jasminekonjoyan@gmail.com
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՖԻ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ մագիստրոս
էլփոստ՝ gsofi3847@gmail.com

Դպրոցում կրտսեր դպրոցական տարիքի սովորողներին դասավանդող ուսուցիչները հաճախ դժգոհում են, որ երեխաները ցրված են, դժվար են կենտրոնանում դասի և առաջադրանքների վրա, որը առաջացնում է երեխաների ընդունակությունների գնահատման խնդիրը: Այս խնդիրը բարձրաձայնում են նաև երեխաների ծնողները՝ նշելով, որ երեխաները շատ արագ շեղվում են դասերից, լրացուցիչ ժամանակ են ծախսում դաս անելիս և ցանկություն ունեն հեռախոսով ու այլ միջոցներով խաղեր խաղալու: Այս խնդիրը այնքան տարածված է, որ երբեմն տպավորություն է ստեղծվում, որ դա նորմալ է:

Մեր կարծիքը խնդիրի վերաբերյալ հետևյալն է՝ կրթական հաստատությունները և ուսումնական ծրագրերը բավականաչափ մոտիվացնող չեն, որի պատճառով երեխաների մեծ մասը ձանձրանում է և շատ արագ շեղվում: Հեռախոսը և այլ միջոցները, արդարության համար պետք է նշել, երբեմն ավելի հետաքրքիր են՝ առաջարկելով գունեղ խաղեր, հերոսներ, որոշները նույնիսկ նպաստում են հիշողության և ուշադրության զարգացմանը: Ներկա ժամանակներում անձի իմացական գործընթացների ուսումնասիրումը և զարգացումը հատկապես նախադպրոցական և կրտսեր դպրոցական հաստատություններում աշխատող անձանց համար մեծ խնդիր է:

Հիշողության ուսումնասիրումը հատկապես կարևոր է հետազոտել, քանի որ այն մյուս գործընթացների հիմքն է: Այդ պատճառով ուսումնասիրության ենք ենթարկել հենց այս գործընթացը: Բազմաթիվ ուսումնասիրողներ 19-րդ դարում գտնում էին, որ հիշողության մեջ է հոգեկանի հիմքը, այսինքն՝ մի բան, առանց որի մյուս մտավոր գործընթացները չեն կարող աշխատել: Նրանք իրենց տեսլականն արտահայտեցին այնպիսի հայտարարություններով, ինչպիսիք են՝ «հոգին հիշողություն է» (հիմնվելով Պլատոնի գաղափարախոսության վրա) և «մտադրությունը հիշողություն է» (հիմնվելով Սպինոզայի գաղափարախոսության վրա)[4]:

Ուստի, կարևորելով հիշողության դերը, այս հոդվածում քննարկել ենք մի շարք ուսումնասիրողների մոտեցումները նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ճանաչողական գործընթացների առանձնահատկությունների զարգացման վերաբերյալ: Այնուհետև ներկայացրել ենք նշված տարիքի երեխաների կարճատև տեսողական և լսողական հիշողության ծավալը, ինչպես նաև սովորելու գործընթացի դինամիկային ուղղված հետազոտություն, որը իրականացվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Գլենդել քաղաքի «Մաթեմատիկայի ռուսական դպրոց» անվանումը կրող կրթօջախում: Հետազոտությանը մասնակցել են 120 նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաներ: Մեր կողմից կիրառվել են Լ. Ֆ. Տիխամիրովի կողմից մշակված «Հիշի՛ր նկարը», «Հիշի՛ր թվերը» մեթոդիկաները:

Մեր կողմից ստացված արդյունքները թույլ են տալիս կատարել եզրակացություն այն մասին, որ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հիշողությունը շատ քիչ է զարգանում: Մենք դա կապում ենք ավանդական մեթոդներով դասավանդման հետ և կարծում ենք, որ ավանդական ուսումնական դասագրքերը ու մեթոդները չեն ներառում ժամանակակից հոգեբանության ձեռքբերումները և նվաճումները:

Բանալի բառեր՝ *ճանաչողական գործընթացներ, հիշողություն, զարգացում, հիշողության ծավալ, տարիքային նորմա:*

Աշխատելով երեխաների հետ՝ նկատեցինք, որ ուսումնական գործընթացում կիրառվող մեթոդներն այնքան էլ չեն նպաստում ճանաչողական գործընթացների, մասնավորապես հիշողության զարգացմանը: Ուսումնական դասագրքերը, դրանցում առկա առաջադրանքները, պատկերները հաշվի չեն առնում աշակերտի անհատական ընդունակությունների զարգացման մակարդակը: Մեր կարծիքը այն է, որ ուսումնական դասագրքերը հիմնականում

ուղղված են տվյալ բնագավառի գիտելիքի փոխանցմանն ու վերարտադրությանը: Գիտելիքը, իհարկե, կարևոր է, բայց կարծում ենք, որ հնարավոր է, կիրառելով ժամանակակից հոգեբանության նվաճումները, ինչպիսիք են հիշողության զարգացմանն ուղղված խաղերը և վարժությունները, դրանք կարելի է ներառել ուսումնական դասագրքերի, առաջադրանքների, տեքստերի և պատկերների մեջ: Այսպիսով, կհասնենք ոչ միայն գիտելիքի փոխանցման, այլ նաև աշակերտի անհատական ընդունակությունների զարգացման:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հիշողության զարգացման շարժընթացը նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների շրջանում:

Հետազոտության խնդիրները.

• ուսումնասիրել թեմայի հիմնախնդրի վերաբերյալ այլ հեղինակների ժամանակակից մոտեցումները և հետազոտությունները,

• փորձարարական ճանապարհով ուսումնասիրել նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հիշողության զարգացվածության մակարդակները,

• հոգեբանական վերլուծության ենթարկել ստացված արդյունքները,

• առաջարկել առկա խնդրի լուծման վերաբերյալ մոտեցումներ:

Հիշողության խնդրին անդրադարձել է Ա. Ա. Նալչաջյանը, համաձայն որի՝ հիշողությունն անհատի կողմից իր փորձը, ընկալած ինֆորմացիան ուղեղում պահելու և հետագայում վերարտադրելու ընդունակությունն է, անհատական կենսափորձի ստեղծման և պահպանման հիմքը: Առանձնացնում են հիշողության մի քանի տեսակ՝ ժառանգական և օնտոգենետիկական, որն էլ իր հերթին լինում է օպերատիվ (կարճատև) և տևական: Դասակարգում են նաև ըստ մտապահվող ինֆորմացիայի բնույթի՝ հուզական, պատկերավոր, խոսքային-հասկացական: Պատկերավոր հիշողության տարատեսակներն են տեսողականը, լսողականը, շարժողականը, հոտառականը և այլն (դասակարգվում են նաև ըստ անալիզատորների): Հիշողության հիմնական գործընթացներն են մտապահումը, պահպանումը, վերարտադրումը, մոռացումը: Ըստ գործունեության նպատակային բնույթի՝ առանձնացնում են կամածին և ոչ կամածին հիշողություններ: Կամածին հիշողություն ձևավորվում է կյանքի ընթացքում, երբ անձի մոտ ձևավորվում են կամային հատկանիշները: Սա անձին բնորոշ բարձրագույն հատկանիշն է [2, 121]:

Ս. Ջ. Արզումանյանը հիշողությունը համարում է մարդու փորձի մտապահումը, պահպանումը և վերարտադրումը [1, 89]:

Առանձնացվում են հիշողության հետևյալ հատկությունները՝

ծավալը, որը միաժամանակ ստացած տեղեկույթի պահպանման ցուցանիշն է,

արագությունը, որը հիշողության գործընթացների ժամանակային ցուցանիշն է,

ճշտությունը, որն արտահայտվում է ստացած տեղույթի առավել ամբողջական և մանրակրկիտ պահպանման ձևով,

տևականությունը, որը դրսևորվում է տեղեկությունը երկար ժամանակ և վառ արտահայտվածությամբ պահելու հնարավորությամբ,

վերարտադրումը, որն արտահայտվում է անհրաժեշտության դեպքում երկարատև հիշողության մեջ պահպանված տեղեկույթն արագ վերհանելու և նոր հիշողություններում ներգրավելու ունակությամբ [3, 165-166]:

Ինչպես նշում էր պատմամշակույթային տեսության հիմնադիր Լ. Ս. Վիգոտսկին, նախադպրոցական տարիքում հիշողությունը սկսում է առաջատար դեր խաղալ, որի զարգացմամբ ի հայտ է գալիս ներկա իրավիճակից անջատվելու և տեսողական-փոխաբերական մտածողության հնարավորությունը: Հիշողությունը հիմնականում ակամա բնույթ է կրում, սակայն նախադպրոցական տարիքի վերջում խաղի զարգացման և մեծահասակի ազդեցության միջոցով երեխան սկսում է զարգացնել կամային, կանխամտածված հիշել, անգիր անել, և հիշելը, որը հասկացվում է որպես հիշողության հոգեկան վիճակ, թույլ է տալիս ճանաչել այն իրը, որը հիշվում է հենց հիշելու պահին: Նախադպրոցական մանկության փուլում առանձնահատուկ նշանակություն ունի շրջապատող աշխարհի իմացության փոխաբերական ձևերի զարգացումը՝ ընկալում, երևակայական մտածողություն, երևակայություն: Նախադպրոցական տարիքում ուշադրությունը, հիշողությունը և մտածողությունը ձեռք են բերում անուղղակի, խորհրդանշական բնույթ, դառնում են ավելի բարձր մտավոր գործընթացներ, ըստ Ա. Ն. Լեոնտևի՝ հիշողության «զարգացման զուգահեռագիծը»: Նախ երեխան սկսում է օգտագործել արտաքին օժանդակ միջոցներ (միջին նախադպրոցական տարիքում), այնուհետև դրանք «ինտեգրվում» են (ավելի մեծ նախադպրոցական տարիքում) [5, 127]:

Նախադպրոցական տարիքի կենտրոնական նորագոյացություններից, որը ազդում է երեխայի կոգնիտիվ գործընթացների վրա, ըստ Օ. Բ. Դարվիշի, հոգեկան գործընթացների կամային բնույթն է, արտացոլումը (անձնային, ինտելեկտուալ), ինչպես նաև գործողությունների ներքին պլանը (մտքում պլանավորում, վերլուծելու կարողություն): Այս տարիքում ինտենսիվ զարգանում է հուզական ոլորտը, սեփական և այլ մարդկանց զգացմունքները հասկանալու կարողությունը: Զգացմունքային զարգացումն ավելի շատ, քան նախկինում կախված է երեխայի՝ տնից դուրս ունեցած փորձառություններից: Երեխաները կարողանում են համեմատաբար կայուն միջանձնային հարաբերություններ

հաստատել, օրինակ՝ ընկերանալ, սովորաբար նույն սեռի հասակակիցների հետ [6, 80-81]:

Կրտսեր դպրոցականի հիշողությունը մեխանիկական է և աստիճանաբար ոչ կամածինից անցում է կատարում դեպի կամածին հիշողության: Կրտսեր դպրոցական տարիքին բնորոշ է առարկայական-պատկերային հիշողությունը, սակայն կան նաև բառատրամաբանական հիշողության զարգացման բոլոր նախադրյալները: Այս տարիքի երեխաները սովորաբար ունենում են նյութը մեխանիկորեն մտապահելու ունակություն: Նրանք հաճախ բառացիորեն սերտում և վերարտադրում են ուսումնական նյութը՝ առանց խորանալու բովանդակության մեջ, և փորձում են իրենց բառերով վերարտադրել:

Մանկավարժական ճիշտ աշխատանքի դեպքում նրանք աստիճանաբար ձեռք են բերում մտապահման հնարներ՝

- նյութի իմաստային խմբավորումը,
- նյութը մասերի հարաբերակցումը,
- տեքստի պլանի կազմումը,
- տարաբնույթ զուգորդումների ստեղծումը և այլն:

Ըստ Լ. Ս. Վիգոտսկու՝ եթե նախադպրոցական տարիքի երեխաների հոգեկան գործընթացների մեջ գերիշխող է հիշողությունը, ապա կրտսեր դպրոցական տարիքում գերիշխող է մտածողությունը: Այս հանգամանքով պայմանավորված՝ արագորեն զարգանում են աշակերտի մտածողության տեսակները:

Փորձարարական մաս

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հիշողության զարգացման շարժ-ընթացը, որպեսզի հասկանանք, թե ինչ փոփոխությունների է այն ենթարկվում ժամանակակից պայմաններում, և փորձենք հայտնաբերել այն հնարավոր պատճառները, որոնք բացասական ազդեցություն են ունենում երեխայի հիշո-ղության զարգացման վրա: Հետազոտությունը իրականացվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Գլենդել քաղաքի «Մաթեմատիկայի ռուսական դպրոց» անվանումը կրող կրթօջախում: Հետազոտությանը մասնակցել են 120 նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաներ:

Մեր կողմից կիրառվել են Լ. Ֆ. Տիխամիրովի «Հիշի՛ր նկարը» և «Հիշի՛ր թվերը» մեթոդիկաները: Այս մեթոդների օգնությամբ հնարավոր է ուսումնասիրել հիշողության տարբեր կողմերը, մասնավորապես թվային հիշողությունը, պատկերավոր հիշողությունը և ընդհանուր հիշողության ծավալը: Այսպիսի փորձարարական մոտեցումը հնարավորություն է տալիս հստակ պատկերացում

կազմելու, թե ինչպես է զարգանում երեխաների հիշողությունը՝ տարբեր տեսակի հիշողության բնութագրերով:

Հետազոտության արդյունքները ամփոփելու համար ներկայացնում ենք դրանք գրաֆիկական արտահայտությամբ:

Տրամագիր 1.



Ինչպես ցույց են տալիս ստացված արդյունքները, երեխաների մոտ գերակշռում է հիշողության ցածր մակարդակը՝ 71-48% սահմաններում, ինչը ցույց է տալիս, որ տարիքին զուգընթաց տեղի է ունենում բարելավում՝ ցածր մակարդակի նվազմամբ: Սա մենք կապում ենք տարիքի զարգացման հետ: Այնուամենայնիվ, հիշողության այս ցուցիչի փոփոխությունը, մեր կարծիքով, բավականին թույլ է, և շարժընթացը շատ դանդաղ է: Մենք այս խնդիրը կապում ենք ուսումնական գործընթացի հետ, քանի որ կարծում ենք, որ ուսումնական գործընթացը ճիշտ միջամտության դեպքում կարող է ապահովել ավելի բարձր արդյունքներ, սակայն ստանդարտ մոտեցումների պայմաններում այն չի նպաստում առավելագույն զարգացմանը: Ճիշտ միջամտություն ասելով՝ մենք նկատի ունենք այնպիսի խաղերի, վարժությունների, նկարների և տեքստերի լսողական և տեսողական կիրառում, որոնք առավելագույնս կնպաստեն հիշողության զարգացմանը:

Նույն շարժընթացը տեսնում ենք բարձր և շատ բարձր ցուցիչներում՝ տարիքին զուգընթաց բարձրանում են տոկոսները՝ 2,5%-ից մինչև 12,18%, որը նույնպես դրական է, սակայն փոփոխությունը բավականին չնչին է:

Հիմնվելով մեր հետազոտության արդյունքների վրա՝ եզրակացնում ենք, որ հիշողությունը նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում թույլ է զարգանում, ինչը պայմանավորում ենք նրանով, որ ավանդական դպրոցը, մեթոդները և դասագրքերը չեն պարունակում ժամանակակից հոգեբանական

գիտության նվաճումները: Այս իրավիճակը հանգեցնում է այն հանգամանքին, որ կրթական գործընթացը չի նպաստում երեխայի հիշողության ներուժի առավելագույն զարգացմանը:

Մեր կողմից ներկայումս մշակվում է ծրագիր, որը նախատեսում է ժամանակակից հոգեբանության նվաճումները ներմուծել ուսումնական գործընթացի մեջ՝ նպաստելու երեխաների հիշողության զարգացմանը: Այս ծրագիրը կներկայացնենք մեր հետագա աշխատանքներում՝ հույս ունենալով, որ այն կբերի համապատասխան բարելավումների և աջակցություն կլինի մանկավարժներին և կրթական համակարգին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արզումանյան Ս., Հոգեբանություն, Եր., «Զանգակ-97» հրատ.,2003,176 էջ:
2. Նալչաջյան Ա. Ա., Ընդհանուր հոգեբանության հիմունքներ. Գիրք 1, Եր., «Լույս», 1991, 511 էջ:
3. Փիլոսյան Ս. Մ., Ընդհանուր հոգեբանություն, Բուհական դասագիրք, Եր., «Զանգակ-97» հրատ., 2023, 424 էջ:
4. Боднар А. М., Психология памяти / курс лекций, [учеб. пособие] / А. М. Боднар, М-во образования и науки Р. Ф., Урал. федер. ун-т., Екатеринбург, Изд-во Урал. ун-та, 2014, 100 с. https://elar.urfu.ru/bitstream/10995/27844/1/978-5-7996-1262-7.pdf
5. Возрастная психология (Психология развития) / электронный учебник, автор-составитель: Кагермазова Л.Ц., д.психол.н., профессор кафедры педагогики и психологии ДПО КБГУ, https://chukotkabezsirot.chao.socinfo.ru/media/2019/01/25/1274339953/Vozrastnaya_psixologiya_uchebnik.pdf
6. Щипанова Д. Е., Психология развития [Электронный ресурс] / учебное пособие Екатеринбург, Изд-во Рос. гос. проф.-пед. ун-та, 2017, 178 с. Режим доступа: http://elar.rsvpu.ru/handle/

THE PROBLEM OF MEMORY DEVELOPMENT IN PRE-SCHOOL AND YOUNGER SCHOOL AGE

AVETISYAN MARIANA
PhD, Associate Professor
Head of the Department of Applied Psychology,
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
e-mail: mariana_avetisyan@yahoo.com
KONJOYAN HASMIK
PhD student of Armenian State Pedagogical University
after Kh. Abovyan, Certified Montessori Teacher, USA
e-mail: jasminekonjoyan@gmail.com
GRIGORYAN SOFI
Master's student of Armenian State Pedagogical
University after Kh. Abovyan
e-mail: gsofi3847@gmail.com

Teachers working with junior school-aged children often report that students are frequently distracted, making it difficult to maintain focus during lessons and complete tasks. Additionally, assessing the abilities of these children presents a significant challenge. Parents also express concern over this issue, noting that children are easily distracted from their lessons, often spend excessive time completing schoolwork, and frequently show a strong preference for playing games on phones and other devices. This problem is so common that sometimes it seems normal. Our opinion on the problem is that educational institutions and curricula are not motivating enough and most children get bored and get distracted very quickly. The phone and other means are sometimes more interesting: they offer colorful games, characters, and some even contribute to the development of memory and attention. Nowadays, the study and development of cognitive processes of a person is a big problem, especially for people working in pre-school and secondary school institutions.

The study of memory is particularly important for this research, as it forms the foundation for other cognitive processes. This is why we focused on examining memory in detail. Many researchers in the 19th century believed that memory was the basis of the psyche, that is, something without which other mental processes could not function, and expressed their vision with statements such as the soul is memory (based on Plato's ideology); intention is memory (based on Spinoza's ideology) [4]. Therefore, emphasizing the role of memory, in this article we have discussed the approaches of a number of researchers regarding the development of the features of the cognitive

processes of children of preschool and junior school age, and then we have presented the volume of short-term visual and auditory memory of children of the specified age, as well as a study aimed at the dynamics of the learning process, which was carried out in the educational center named "Russian School of Mathematics" in Glendale, United States of America. 120 children of preschool and junior school age participated in the research. We used the methods introduced in "Remember the picture" and "Remember the numbers" by L. F. Tikhomirov.

Our results allow us to conclude that the memory of children of preschool and junior school age develops very little. We associate this with traditional teaching methods and believe that traditional textbooks and methods do not include the achievements of modern psychology.

Keywords: *Cognitive processes, memory, development, volume of memory, age norm.*

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ПАМЯТИ В ДОШКОЛЬНОМ И МЛАДШЕМ ШКОЛЬНОМ ВОЗРАСТЕ

АВЕТИСЯН МАРИАНА
Кандидат психологических наук, доцент
Заведующий кафедрой прикладной психологии АПГУ
электронная почта: mariana_avetisyan@yahoo.com
КОНДЖОЯН АСМИК
Соискатель АПГУ
Сертифицированный Монтессори-педагог, США
электронная почта: jasminekonjoyan@gmail.com
ГРИГОРЯН СОФИ
Магистр АПГУ
электронная почта: gsofi3847@gmail.com

Педагоги, работающие с младшими школьниками, часто выражают обеспокоенность по поводу того, что, дети рассеянны и испытывают трудности с концентрацией внимания на уроках и выполнении заданий, что осложняет процесс оценки их способностей. Родители также отмечают, что их дети быстро отвлекаются, тратят время впустую и предпочитают играть в телефонные игры или увлекаться другими способами развлечения. Эта проблема настолько распространена, что порой воспринимается как нормальное явление.

Мы считаем, что образовательные учреждения и учебные программы недостаточно мотивируют детей, из-за чего большинство из них быстро скучают и теряют концентрацию. Телефоны и другие средства досуга, откровенно говоря, нередко оказываются более увлекательными: они предлагают яркие игры, увлекательные персонажи, а некоторые даже способствуют развитию памяти и внимания.

В современном мире изучение и развитие когнитивных процессов человека является важной задачей, особенно для специалистов, работающих в дошкольных и младших школьных учреждениях. Исследование памяти имеет особую значимость, поскольку она лежит в основе других познавательных процессов. Именно поэтому в центре нашего внимания оказался этот аспект.

Многие исследователи XIX века считали, что память является основой психики, то есть без нее другие мыслительные процессы не могут функционировать. Их взгляд на этот вопрос выражался в таких утверждениях, как **«Душа — это память»** (основано на философии Платона) и **«Намерение — это память»** (основано на идеях Спинозы).

Исходя из значимости памяти, в данной статье нами рассматриваются подходы ряда исследователей к развитию когнитивных процессов у детей дошкольного и младшего школьного возраста, а также представляютя данные о краткосрочной визуальной и слуховой памяти детей данного возраста, а также результаты исследования динамики процесса обучения, проведенного в образовательном центре «Русская школа математики» в Глендейле (США).

В исследовании приняли участие 120 детей дошкольного и младшего школьного возраста. Тами были использованы методы «Запомни картинку» и «Запомни цифры», разработанные Л. Ф. Тихомировой. Наши результаты позволяют сделать вывод, что развитие памяти у детей дошкольного и младшего школьного возраста происходит недостаточно активно. Мы связываем это с традиционными методами обучения и считаем, что стандартные учебники и методические пособия не учитывают современные достижения психологии.

Ключевые слова: *познавательные процессы, память, развитие, объем памяти, возрастная норма.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.01.2025թ.:
Հոդվածը գրախոսվել է 25.01.2025թ.:
Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: